

ՏԱՐԷԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Ի Լ Ա Խ Ա Ց Ե Ի Օ Լ Ա Խ Ա Ց Ե Ր Կ Ր Ի

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Մ ՋԳԻՄ՝ գուցէ ոչ պակաս քան զքնիկ հայրենեացն՝ յօտար երկիր
զաղթականացն պատմութիւնն այլ կըրնայ շատ հետաքրքրական
ըլլալ, եթէ և կարելի ըլլար գտնել, հաւաքել և յայտնել. գործ
երկար և դժուար՝ մէկ անձին համար. այլ դիւրին, եթէ գիտնականք
զաղթականութեան գլխաւոր կենդրոնից՝ ձեռք զարնեն իրենց երկրորդ
հայրենեաց ծագումը լուսաբանել, զոր յետոյ կըրնայ և մէկ անձ մ'այլ հա-
մահաւաքել: Այսպիսի գործոյ արդէն փորձեր եղած են, թէ ազգային օրա-
գրաց մէջ և թէ առանձին գրքոյկներով. որպէս երբեմն և մեր օրագրիս
մէջ, և վերջի տարիներս Վիեննայի Միսիթարեանց Հանդիսի մէջ, յատկաբար
Հունգարիոյ Հայոց վրայօք: — Յետոնցս գուգակից՝ աւելի կամ նուազ պա-
րագայիւք՝ երկու մեծ կենդրոնք զաղթականութեան Հայոց եղած են և կան,
Լեհաց և վրանաց, ռամկօրէն իրախաց և Ոլախաց: Առաջինն է ի Լեհաստան
զաղթեալ և բնակեալ Հայոց, քան զամենեօին նշանաւոր. որ ի կիսոյ ԺԳ
դարու մինչեւ ցայժմ անընդհատ եպիսկոպոսական և արքեպիսկոպոսական
աթոռ ունի, պատուեալ և հռչակեալ յԱւստրիական կայսերութեան: Եր-
կրորդն՝ ի Գանուբեան նահանգս, ի Վալաքիա և Մոլտաւիա (Ուլահ-Պուդ-
տան), որ թէ և յատուկ եկեղեցական աթոռ չէ ունեցեր, այլ երբեմն ա-
ռանձին կողմանց և քաղաքաց եպիսկոպոսներ, երբեմն Լեհահայոց աթոռոյն
հպատակ. հիմայ այդ երկու նահանգաց միանալով՝ թագաւորութեամբ Ռու-
մանիոյ, ինչպէս և Սերպաց յատուկ տէրութեամբ, տեղացի Հայոց վիճակն
այլ քաղաքական փոփոխութիւն և ինքնութիւն մի առաւ. և յառաջագոյն
սկսան իրենց առաջին և միջին զաղթական հարց և նախնեաց անցուկացը
հետազօտել, և թէ տեղոյն լեզուաւ թէ հայերէն՝ ծանօթութիւններ ընծայել:
Ռոմանիոյ մէջ երկու պատուաւոր գիտնականք, թէ և ոչ համակարծիք,
մէկն բնիկ երկրին (և ըստ մեզ՝ օտարագրի) Պր. Հրփտեա՝ ռոմանական ա-
կադեմիոյ ընկերակից, միւսն՝ մերազգի Պր. Գրիգոր Պրյըզդևսե, տէրու-
թեան բարձրագոյն և վճարեկ աստենին դատաւոր, ԺՁ դարու մէջ՝ այն